


# Tax Stamp ՀԱՄԱԿԱՐԳ


## ՕԳՏՎՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ

### Tax Stamp համակարգի ներբեռնման և օգտագործման նկարագրությունը

Քայլ 1 - Tax Stamp ծրագիրը **iphone մակնիշի** հեռախոսում ներբեռնելու համար անհրաժեշտ է մուտք գործել [store.apple.com](https://store.apple.com) պաշտոնական կայք և որոնման դաշտում ներմուծել **tax stamp** բառակապակցությունը:




Որոնման արդյունքներից ընտրեք անհրաժեշտ **Tax Stamp** ծրագիրը:

Քայլ 2 – ծրագիրը ներբեռնելու համար սեղմեք  կոճակը:



Քայլ 3 – Ներբեռնումը ավարտելուց հետո սեղմեք **OPEN** կոճակը ծրագիրը հեռախոսում տեղադրելու համար:



Քայլ 4 – Ծրագիրը տեղադրվելուց հետո բացեք այն և սեղմեք **Սկանավորել** կոճակը:



Քայլ 5 – Հեռախոսի տեսախցիկը մոտեցրեք դրոշմապիտակին այնպես, որ նրա **barcode (2d code)** լինի էկրանի ճիշտ մեջտեղում՝ քառակուսի նշման մեջ:



Ծրագիրը ինքնաշխատ եղանակով նկարահանում և սկանավորում է դրոշմապիտակը: Հիմնական էջ վերադառնալու համար սեղմեք **«Չեղարկել»** կոճակը:

Իսկ եթե լուսավորությունը քիչ է և պահանջվում է առավել շատ լուսավորություն՝ սեղմեք «[Lույս](#)» կոճակը, տեսախցիկի լույսը միացնելու համար:

Քայլ 6 – Սկանավորում կատարելուց հետո, ցուցադրվում է դրոշմապիտակի սերիան, ապրանքը արտադրող կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը և հասցեն:



Հիմնական էջ վերադառնալու և նոր սկանավորում իրականացնելու համար սեղմեք «[Չեղարկել](#)» կոճակը: